№ 124 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 15 — 1904 — ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 15 № 124

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Եւրոպական քաղաքական աշխարհում ամենախոշոր և կարևոր եղելութիւնը անգլիական Էդուարդ թագաւորի և գերմանական Վիլհելմ II կայսրի տեսակցութիւնն է։ Ներկայումս մի քանի միջազգային ընթացիկ խնդիրների վերաբերութեամբ որոշակի յայտնի չէ, թէ ինչ դիրք են մտադիր բռնելու Անգլիան և Գերմանիան առաջիկայում։ Իսկ այդ դիրքից կախված է որոշ չափով այդ հարցերի գործնական լուծումը։

Բացի Աֆրիկայեան և Հեռաւոր Արևելքին վերաբերեալ խնդիրներից, ներկայումս խոշոր տեղ են բռնում քաղաքացիական աշխարհում Մերձաւոր Արևելքի և առհասարակ Թիւրքիայի հետ առնչութիւն ունեցող մի շարք հարցեր, որոնցով զբաղվում են ոչ միայն տեղական, այլ և միջազգային եւրոպական շահեր։ Անգլիան, որ տասնեակ տարիների ընթացքում հետևում էր Թիւրքասիրական քաղաքականութեան, վերջին տասնեակ տարիներում սկսեց փոխել իր վերաբերմունքը և բացարձակ կերպով զգացնել է տալիս Թիւրքիային, որ նա չէ կարողանում հաշտվել Թիւրքական վարչական կարգերի հետ և որ հէնց այդ պատճառով Անգլիայի հասարակական կարծիքը Թիւրքիայի վերաբերութեամբ աննպաստ է դարձել։ Գերմանիան, ընդհակառակը, միայն վերջին տասնեակ տարիների ընթացքումն է սկսել չափազանց մօտենալ Բարձր Դրան և հետևել Թիւրքասիրական մի քաղաքականութեան, որ արդէն շահել է Գերմանիայի համար մի շարք արտօնութիւններ օսմանեան պետութեան զանազան մասերում։ Սակայն, ինչպէս և լինի այս կամ այն պետութեան վերաբերմունքը դէպի Թիւրքիան սեփական շահերի տեսակէտով, այնուամենայնիւ Մակեդոնիայի և Փոքր-Ասիայի վարչական բարեկարգութեան չը լուծված հարցերը, ժամանակ առ ժամանակ ասպարէզ գալով, ստիպում են եւրոպական կառավարութիւններին միջոցներ մշակել՝ մի բաւարար ելք գտնելու անվերջ շարունակվող հարցերի առիթով։

Քաղաքական աշխարհում իրանց վրա ուշադրութիւն դարձրին Միացեալ-Նահանգների նաւատորմի շարժումները Միջերկրական ծովում, որոնց բնաւորութիւնը և վերջնական նպատակը դեռ պարզ չէ բոլորովին։ Եւրոպական պետութիւնները պաշտօնական կերպով ոչ միայն պահպանել և պահպանում են խաղաղութիւն, այլ և ամեն կերպ աշխատում են ապահովել խաղաղութիւնը. սակայն նրանք շարունակում են զինվել և այդ պատճառով ռազմաթերը պատրաստող գործարանները ամենաեռանդուն և լարված աշխատանքների մէջ են ներկայումս։

Քաղաքական աշխարհի հանգամանքներից յիշենք նաև հետևեալը։ Անգլիական արշաւանքը, որ տեղի ունի Տիբեթում, կանգ էր առել Գեանդզէում։ Նրա հրամանատարը պատգամաւորութիւն էր ուղարկել Լհասսա տիբեթական հոգևոր պետ Դալայ-Լամային, պայման դնելով, որ մինչև յունիսի 12-ը ներկայացուցիչներ գան բանակցութիւններ սկսելու և դաշնագիր կապելու, սպառնալով, որ հակառակ դէպքում անգլիական զօրքը կը շարժվի դէպի Լհասսա։ Պայմանաժամը անցաւ, յունիսի 12-ին չեկան ներկայացուցիչներ։ Ուրեմն անգլիական արշաւանքը պէտք է շարունակվի։ Տեսնենք ինչ լուրեր կը բերեն հեռագիրները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Յունիսի 10-ին

Մեր միակ հասարակական զբօսատեղին—բուլվարը, գտնվում է խղճալի դրութեան մէջ։ Եթէ դուք տեսել էք յիշեալ բուլվարը 10—15 տարի առաջ, հիմա էլ մի և նոյն դրութեան մէջ կը գտնէք։ Ոչինչ չէ աւելացել, ոչնչով չէ բարեկարգվել, այլ ընդհակառակը ծառերը փչացել ու բուլվարն էլ այլանդակվել է։

Քաղաքային դումայի ձայնաւորները այնպիսի անհոգութեամբ են վերաբերվում դէպի քաղաքիս հասարակական հիմնարկութիւնները, որ պախարակելու համար նոյն իսկ յարմար խօսք չենք գտնում ուղղելու նրանց հասցէին։

Մինչդեռ ուրիշ երկրներում ու քաղաքներում անագին փողեր են ծախսում ու նորանոր այգիներ, պարկեր պատրաստում, մինչդեռ օտար երկրներում նոյն իսկ տներն էլ են քանդում, որպէս զի դարձեալ այգիներ դցեն, նկատի ունենալով այդպիսով բարեկարգել քաղաքի առողջապահական դրութիւնը,—մեզ մօտ, ընդհակառակը, եղածն էլ, շնորհիւ մեր տգիտութեան, փչացնում, աւերում ենք...

Հանգուցեալ Թ. Թամիրեանի բերած աղբիւրից մի գիծ էլ անց է կացրված բուլվարը։ Սա մի մեծ յարմարութիւն է այնտեղ ծառեր ու ծաղիկներ բուսցնելու։ Սակայն այդ մէկն էլ է աչքի թող արված և մեր բուլվարը մընում է նահապետական դրութեան մէջ։ Եղած մի քանի թզուկանման ծառերը աւելի են փոքրանում։ Նստարանները ամբողջ ութ ամիս ճալով ձիւնի և անձրևի տակ, փչանում, անպէտքանում են, մինչդեռ նորերը ձեռք չեն բերվում։

Այս տարի երաժշտական խումբն էլ չէ նուագում։

Չենք հասկանում ի՞նչ մի դժուարութիւն է ներկայանում ամառվայ ամիսներին մի այգեպան վարձել, որը հսկէր ծառերին ու ծաղիկներ բուսցնէր։ Ծաղիկներից ո՛չ մի ճաշակ չի կրի քաղաքային ինքնավարութիւնը, այլ, ընդհակառակը, ծախելով նրանց, կարող է արդիւնքի մի փոքրիկ աղբիւր ստեղծել ու այդպիսով ծածկել մասամբ բուլվարի վրա արած ծախսերը։

Այսքան անհոգ վերաբերվելով հանդերձ, մենք գանգատվում ենք, թէ ինչո՞ւ ամարանոց եկողների թիւը չէ աւելանում, մոռանալով մի բոպէ, որ ամարանոց եկողին զրկում ենք ամեն տեսակ յարմարութիւնից։ Ինչո՞ւ ամարանոց եկողներին, այլ և մեզ զրկում ենք ամենատարրական յարմարութիւններից, շնորհիւ մեր անհասկացողութեան։

Քաղաքիս փողոցները, բագերը իրանց կեղտոտութեամբ փայլում են և երբէք սանիտարական յանձնաժողովի անդամները պարտք չեն համարում հսկել այդ պակասութիւնների վրա։ Հէնց դրանով էլ պէտք է բացատրել Շուշում շարունակ տեղի ունեցող տարափոխիկ հիւանդութիւնների պատճառը... էլ ի՞նչով գրաւվի ամարանոց եկողը, ասացէք խընդրեմ։

Ընդհանրապէս մենք շատ թիւր հասկացողութիւն ունենք առողջապահութեան մասին։ Այլապէս բոլորովին ուրիշ կերպ կը վերաբերվէինք թէկուզ դէպի բուլվարը, դեռ չենք խօսում ժաքրասիրութեան մասին։

Մեր շուշեցին առաւօտից մինչև երեկոյ կը նստէ խանութում և երեկոյեան բոլորովին հարկաւոր չի համարի թէկուզ մի ժամ շրջել ժաքուր օդում, կամ մի կէս ժամով ընթերցարան մտնել ու աչքի անցկացնել թերթերը։ Փորձի համար մտէք ընթերցարանը կամ բուլվարը և այնտեղ միայն երիտասարդներին կը գտնէք։ Ապա մի փորձեցէք որ և է վաճառականի կամ ուրիշ գործի տէր մարդու ասել, որ առանց առողջութեան իրանց աշխատած փողերը ոչինչ արժեն, որ մարդ միայն մամոնայով չէ ապրում, այլ և կան ուրիշ բարձր բաներ, և դուք այնպիսի կնճռված դէմքի կը հանդիպէք, որ ձեր գահլէն բոլորովին կը տանէ, կամ կը լսէք հետևեալ բնորոշ խօսքերը. «Է՜... հիմնէս ասում է՛... հիմնէ օթ, գաղափար բաղըղա... լեաւ քեաբաբ ա պըտիս, ճէլ կարմիւ գինի. ոտես, խմես, դինջ քօն ընիս։ Էլ օթըս վէրնա, էն մինը վէրնա... Քինի՛, քինի՛, գլխա իլ, ես քու սամունքնեբան չըմ...»

Այս է ցաւալի իրականութիւնը։ Եւ թող ընթերցողը չը զարմանայ, որ այդ մարդիկ ամեն ինչի խոչնդոտ են հանդիսանում, նոյն իսկ... բուլվար, ընթերցարան գնալուն։

Մեր փոքր ի շատէ հասկացող դասակարգը այնպէս է դրաւվել ժողովարանով ու կանաչ սեղանով, որ մոռացել է ամեն ինչ և չը գիտէ ինչ է կատարվում իր շուրջը։

Բայց վերջապէս, այս բոլորին վերջ լինելու է, թէ՞ ոչ...

Կովկասեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շաբաթ օրը, յունիսի 12-ին, ժամանակաւորապէս պարտական գիւղացիների բնական տուրքերը փողայինի վերածելու և նրանց հողաբաժինները գնելու համար ծրագիր մշակող կոմիսսիան վերջացրեց իր զբաղմունքները։ Մասնակցողներից շատերն արդէն հեռացել են Թիֆլիսից։

—

Ինչպէս արդէն հաղորդել էինք անցեալ անգամ, Թիֆլիսի ձիաբարշների անօնիմ ընկերութիւնն այս տարվայ հոկտեմբերին մտցնում է էլէքտրաքարշ՝ գոյութիւն ունեցող գծերից ամենագլխաւորների վրա, իսկ դեկտեմբեր ամսին բոլոր գոյութիւն ունեցող գծերն արդէն ունենալու են էլէքտրաքարշներ։ Հետևեալ 1905 թ-ի սկզբից ընկերութիւնն սկսելու է նոր գծերի կառուցումը. այդ նոր գծերն են Սօլոլակի, Դաւիթի (դէպի Ֆունիկուլէրը), Դիդուբէի, Հալաբարի և Նաթլուղի։ Մինչ-Փողոցով քարշակի գիծ անցկացնելու խնդիրը սերտ կերպով կապված է այդ տեղում եղած մասնաւոր սեփականութիւնները գնելու, քանդելու և փողոցը լայնացնելու հարցի հետ։

—

Երգիչ Ա. Կոստանեան, որ մի քանի օր սրանից առաջ ուղևորվեց Շուշի, գրում է մեզ հետևեալը. «Ճանապարհին Ղարբանդ և Աղդամ կայարանների միջև իմ կառքի ետևից կտրեցին արկղ և տարան անագին քանակութեամբ զանազան առարկաներ, որոնց մեծ մասը ոսկեղէն ու քարեղէն իրեր էին և 250 բուբլի փող։ Ես իմ կողմից դիմելով իմ արկղը գտնողին, առաջարկում եմ փողը իրան վերցնել, բայց վերադարձնել ինձ Շուշի իմ հասցէով թղթերը, մուրհակները և մի քանի կտոր ոսկեղէն իմ անուան մակագրութեամբ»։

—

Կին-բժիշկների փոխադարձ ընկերութիւնը կամենում է շինել մի բուժարան Սօչիում Սև ծովի ափում, Վերեշչագինի ամարանոցի հողաբաժիններից մէկի վրա։ Այդ բուժարանում կամ սանատորիայում ընդունվելու են ծերացած, հանգստի ու բժշկութեան կարօտ կինբժիշկները։ Համակրելի ընկերութեան այդ համակրելի ցանկութիւնն իրականացնելու համար պակասում են նիւթական միջոցներ։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան ֆինանսական յանձնաժողովի պ. նախագահը, դիմելով վարչութեան մէջ գործող բոլոր յանձնաժողովներին, խնդրում է յայտնել, թէ ինչ մեծ փոխառութիւն է հարկաւոր իրանց դիտաւորութիւնները իրագործելու համար և նոյնպէս, թէ որքան օգուտ և ծախքեր կարելի է սպասել այդ դիտաւորութիւնները իրագործելու դէպքում։ Յետագայ համարում մենք կաշխատենք տալ մանրամասն տեղեկութիւններ այդ չափազանց հետաքրքիր առաջարկութեան մասին, որը խիստ մեծ նշանակութիւն ունի քաղաքի առաջադիմութեան խնդրում։

—

Լօձի կտորեղէնների գործարանների տէրերը որոշել են իրանց գործարաններում աշխատելու օրերը շաբաթվայ ընթացքում 5-ից իջեցնել 4-ի։

—

Թիֆլիսի քաղաքային առաջին ապաստարանի կառավարչի հաշուից երևում է, որ մայիս ամսվայ ընթացքում յաճախել են ընդամենը 2,260 հոգի, որոնցից 2,123 հոգի տղամարդիկ և 137 կանայք։ Ըստ ազգութիւնների ռուսներ եղել են՝ 719 տղամարդիկ և 76 կանայք, հայեր՝ 1100 տղ., վրացիներ՝ 245 տղ. և 31 կին, թուրքեր 31 տղ., գերմանացիներ՝ 10 տղ., լեհեր՝ 16 տղ. և 31 կին., և զանազան ազգութիւններ՝ 2։ Ամենամեծ թիւը կազմում են մշակները (1127 հոգի), յետոյ գործի անընդունակները 379 հոգի և ապա ծառայողները՝ 289 հոգի։

—

Պետերբուրգի կանանց բարձրագոյն կուրսերում մտադրութիւն կայ բանալ իրաւաբանական ֆակուլտետ։ Մշակվում են այդ ֆակուլտետի ծրագրի նախամանրամասնութիւնները։ Կարծում են, որ դրա բացումը կը կայանայ 1905 թ-ի ուսումնական տարվայ սկզբից ոչ առաջ։ Ներկայ տարվայ աշունքից այդ հարցը կենթարկվի ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան քննութեանը։

—

Թիֆլիսում թափառաշրջիկ շների որսալը նշանակված է հետևեալ ժամանակամիջոցներում՝ I քաղաքամասում յունիսի 16, 17 և 18-ին, II-ում 19, 20 և 21-ին, III-ում 22—24-ին, IV-ում 25—26-ին, V-ում 28—30-ին։

—

„Бак. Изв.“ լրագիրը հաղորդում է Յ. Ադամեանի սպանութեան հետևեալ մանրամասնութիւնները. «Ադամեանի օգնութեան կոչին մօտ վազեց պարտէզում գտնվող բաղուցի Հաջի-Ալէկպէր-օղլին, որի վրա չարագործները մի քանի անգամ կրակ արին, բայց չը կպան։ Յետոյ օգնութեան վազեց այգու ծառան, բայց գնդակով վերք ստացաւ կուրծքին։ Չարագործները պարտէզից դուրս ելան։ Սադօվի փողոցը և կառք նստեցին, որը, ինչպէս երևում է, սպասում էր նրանց։ Գօրգօվօյը, լսելով բռնելու աղաղակները և տեսնելով, որ մարդիկ են ընկած չարագործների ետևից, բռնեց կառքի ձիերի սանձերը, բայց նրա վրա էլ կրակ արին, որոնցից երկուսը կպան սրին, և շշմած ոստիկանը բաց թողեց ձիերի սանձերը, որոնք սրարշաւ թռան Սադօվի փողոցով իգական գիմնազիայի ուղղութիւնով, ուր չարագործների դէմ ելաւ Պօսայ-Գօլեսօ գօրգօվօյը, որի վրա նոյնպէս կրակ արին և բռնեին անհնար եղաւ։ Կառքն այդ տեղից սլացաւ Զավեդենիայի փողոցով, և նրա վրա նստածներն աջ ու ձախ գնդակներ էին արձակում։ Ոչ ոք նրանց չը կանգնեցրեց և նրանք արագ անցան Վ. Տաղապիրեան փողոցով ու անյայտացան։ Սակայն նոյն օրը ոստիկանութիւնը ձերբակալեց Հակական կալօնիայում այն կառապանին, որը տանում էր մարդասպաններին»։

—

Երկրագործութեան մինիստրութեան լեռնային վարչութեան կից երկրաբանական կոմիտէտը, որ 1901 թ-ին սկսել է Կովկասի նաւթաբեր շրջանների մանրաքննին ուսումնասիրութիւնը, այս տարի էլ պէտք է շարունակէ իր աշխատանքները նոյն ուղղութիւնով, կոմիտէտի աւագ երկրաբան պ. Սոկոլովի ղեկավարութիւնով։

—

Թիֆլիսի քաղաքային խորհրդի ձայնաւոր

պ. Թամամշեանը, դիմելով քաղաքային վարչութեան, խնդրում է յայտնել իրան, թէ վերջին ժամանակներս ո՞րքան օգուտ էր ստացվում քաղաքային այն գետեղրեայ բաց հողերից, որոնք գտնվում են Վերայի կամուրջից վերև և ո՞վ էր հսկողը այդ եկամուտի վրա։ Իր ունեցած տեղեկութիւններից երևում է, որ հսկում էր նրանց վրա ոչ թէ շուկայի ոստիկանութիւնը, այլ մի դեսեատնիկ, որի հաշիւները ինքը չէ կարողացել գտնել վարչութեան գործերում։ Ի վերջոյ պ. Թամամշեանը յայտնում է, որ եթէ վարչութիւնը կը դժուարանայ իր խնդիրքը կատարել, այդ դէպքում թող խնդիրքը ներկայացնէ քաղաքային խորհուրդին։

—

Հաղորդակցութեան ճանապարհների տնտեսութիւնը առաջադրում է ուշադրութիւն դարձնել կայարանների գործակալների և կոնդուկտորների բրիգադի կոպիտ վարմունքի վրա ժողովրդի հետ։ Առաջադրված է միջոցներ ձեռնարկել վերացնելու համար ճանապարհորդների կողմից որ և է բողոքի առիթ տուող հանգամանք, լաւ քննել բոլոր արտայայտված կարիքները և, եթէ նրանք օրինական լինեն, անյապաղ բաւարարութիւն տալ։ Քաղաքավարի և կամակատար վարմունքով պէտք է վերացնել յանդիմանութիւնների և գանգատների պատրուակները։

—

Թիֆլիսի կայսերական բժշկական ընկերութիւնը յայտնել է քաղաքային վարչութեան իր շնորհակալութիւնը այն մասին, որ քաղաքային խորհուրդը վճռել է իր ծախսով կառուցանել քաղաքային Պուշկինեան գրադարանի շինութեան երկրորդ յարկը և թոյլ տալ ընկերութեան ձրիաբար օգտվել նրանից 25 տարի շարունակ։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ամսիս 15-ին Նիկողայոսեան տօնավաճառը պաշտօնապէս փակվում է»։

—

ՇԻՐԱԿԻՑ մեզ գրում են. «Ցարգելի պրոֆէսոր Ն. Մարրի գալուստը Անիի աւերակներում պեղումներ կատարելու համար բաւական ուրախութիւն է պատճառել Շիրակի հայ գիւղացիներին. օրվայ խօսակցութիւնը այն է, որ «մէկ մեծ մարդ է եկել շատ հեռու տեղից Անիում փորուածքներ անելու, մեր հնութիւնները լոյս աշխարհ հանելու»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Ցրտաշունչ անձրևային օրերից յետոյ Շիրակում եղանակները բաւական լաւ անցան, շուտ-շուտ տեղում էր կարկուտ, որը չէր կարող վնասել հացաբոյսին. բերքը այս տարի ևս առատ կը լինի, եթէ ազատ մնայ երկնային պատահարներից։ Հացի գինը սովորական է»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Այսօր յունիսի 10-ին, առաւօտեան ժամը 9-ին, Բագուի յայտնի նաւթահանքատէր Արտէմ Իւանիչ Ադամեանը, քաղաքային այգով անցնելիս, մի անյայտ անձնաւորութիւն յարձակվում է նրա վրա և դաշոյնով մի քանի հարուած հասցնում։ Պ. Ադամեանը ծանր հարուածներից տեղն ու տեղը վայր է ընկնում և քիչ յետոյ վախճանվում։ Այգեպանը տեսնելով այդ դրաման, յարձակվում է բռնելու, բայց մարդասպանը այգեպանին էլ ատրճանակով վիրաւորում է և սկսում փախչել։ Մօտ ոստիկանը ատրճանակի ձայնը լսելով օգնութեան է վազում և տեսնելով մարդասպանին փախչելիս, աշխատում է բռնելու, բայց մարդասպանը այգեպանին էլ ատրճանակով վիրաւորում է և սկսում փախչել։ Մօտ ոստիկանը ատրճանակի ձայնը լսելով օգնութեան է վազում և տեսնելով մարդասպանին փախչելիս, աշխատում է բռնելու, բայց վերջինիս էլ մի քանի մահացու հարուածներ հասցնելով դարձեալ սկսում է փախչել դէպի «Զեմբերքենտ» կոչված թաղը, որտեղ և անյայտանում է, թողնելով երկու դիակներ և մի վիրաւոր»։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Սուրմալու գաւառը Երևանի նահանգի գուցէ ամենաթշուառ անկիւններից մէկն է, որի ժողովուրդը, ինչպէս անպատրաստ կուլտուրական կռիւ մղելու, ինքնօգնութեան ոչ մի միջոցի դիմելու սովորութիւն չունի։ Սակայն այդ թշուառ Սուրմալուն էլ ունի իր թշուառագոյն անկիւնը. դա Մասիս լեռան ստորոտի Արհաջ գուտ Թուրքաբնակ և Իգդիրմավայ խառն թուրքահայ գիւղերն են, որոնք ամենաանխիղճ կերպով ամեն տարի տուժում են համարեա ամբողջ Սուրմալուի մեղքը։ Երկու գիւղից մօտ վեց հարիւր դեսեատին շատ բերրի հողեր մնում են ջրի տակ, ցանած թէ անցանել, և մնանկացնում տէրերին. բայց մի՞թէ ճար ու իլլաջ չը կա՞յ այդ վտանգի առաջն առնելու։ Ճար ու իլլաջը վաղուց շինված ու պատրաստ դրված է թէ սուրմալուեցիների և թէ տեղական ջրաբաշխային վարչութեան առաջ. սակայն ո՞վ է ում վկայականը կարդում (թուրքական առած)։ Նախկին միրաբները միմիայն ժողովրդին կլպահան անելու մասին էին մտածում (բացի Ա. Մակիսսկուց, որը մի ամառ միայն միրաւութիւն արեց)։ Քանի օր առաջ հաստատվեց նոր միրաբ Իսմայիլ բէգ Սուլթանովը, որը հանդիսաւոր կերպով խոստացաւ այդ բաների առաջն առնել և ջրի տակ լինելուց ազատել այն հողերը, որ վնասվում էին լոկ վարչութեան անուշադրութիւնից։ Ցիշեալ խնդիրը կարևոր է նաև նրանով, որ համարեա արհեստական կերպով գոյացած լճերը, ամառը հոտելով, առանձնապէս նպաստում են մալիարիա հիւանդութեան տարածվելուն, որից մի քանի տարի տուժում է խեղճ Սուրմալուի ժողովուրդը»։

—

Նոր-Բայազէտի գաւառի ՋՈՒԼԱԼԻ գիւղից մեզ գրում են. «Մայիսի 30-ին, կիրակի օրը, մեր գիւղական եկեղեցում, պ. Ներսիսեանի նախաձեռնութեամբ, հոգեհանգիստ կատարվեց Ս. Նազարեանի մահվան 25-ամեակի առիթով։ Եկեղեցում ներկայ էր գիւղական հասարակութեան մեծ մասը։ Պատարագից յետոյ պ. Ներսէս Ներսիսեանը կարդաց Ս. Նազարեանի կենսագրութեան և գրական-հասարակական գործունէութեանը նուիրված մի ճառ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Վլադիվոստոկից, յունիսի 8-ից, հեռագրում են. «Կօրէյական ջրանցքում ջրասոյզ արված «Խիտաչիմարու» նաւի վրա գտնվում էր մէկ ամբողջ հետևակ գունդ լիակատար սայլախմբով և մի գեներալ իր շտաբով։ Կարծում են, որ ոչնչացրված գունդը պատկանում էր 10-դ դիվիզիային։ «Սադօմարուի» վրա գտնվում էին կամուրջի մասեր։ Դանձարանը բաղկացած էր 2 միլիոն ին ոսկուց անգլիական դրամով։ Ոսկով արկղները եապօնացիները սկսեցին ջրի մէջ թափել ռուսական կրէյսէրի մօտենալու ժամանակ։ Նոյնպէս ջուրն ածեցին բազմաթիւ թղթեր, գծագիրներ և պլաններ։ Նաւի վրա գտնված երկաթուղիական նիւթը այն ճանապարհի համար էր նշանակված, որ կառուցվում է Սէուլի և Ի-Զժուի միջև։ Երբ «Սադօմարուի» վրա ռուսական կրէյսէրից փախչելու յոյսը կորցրին, այն ժամանակ կուլիները կողոպտեցին գինու, գարեջրի և օղիի պաշարները, այդ պատճառով մեծամասնութիւնը հարբած էր։ Երբ հրամայվեց հեռանալ շոգենաւից, սարսափելի անկարգութիւն սկսվեց, և շատերը խեղդվեցին։ 2-դ կարգի կապիտան Օկու, շոգենաւի հրամանատարը, որին ծառայութեան մէջ էին ընդունել 22 տարի պահեստի զօրքի մէջ մնալուց յետոյ, բոլորովին ծեր է։ Ասում են, որ եապօնացիները զինուորական փոխադրող նաւերի ծառայողների ահագին պակասութիւն ունեն, ստիպված են լինում օտարներին դիմել։ Օրինակ «Սադօմարուի» վրա նաւային երեք օֆիցէրներ,—Էդուարդ Անդէրսօն, Ջոն Դրինգ և Վիլիամ Կէր,—անգլիացիներ են. նոյնպէս է և բոլոր ուրիշ շոգենաւերի վրա։ Անգլիացիներն ասում են, որ ամենևին չէին սպասում հանդիպել վլադիվոստոկեան էսկադրային։ Նրանք չէին կամենում հաւատալ, տեսնելով ռուսական նաւերը, և եապօնական նաւերի տեղ էին ընդունում նրանց։ Եապօնացիները ամենակտրական կերպով հաւատացրել էին նրանց, որ ռուսական նաւերը ամուր փակված են Պօրտ-Արտուրում և Վլադիվոստոկում, որ Դեղին և Եապօնական ծովերում լողալը կատարելապէս ապահով է։ Այդ համոզմունքը նրանց մէջ այն աստիճանին էր հասնում, որ Կօրէական ջրանցքը բոլորովին անպաշտպան էր մնացել և ռուսական կրէյսէրները կատարելապէս ազատ ամեն ինչ անում էին։

Գեներալ Կուրոպատկինի վրա յարձակվել պատրաստվող եապօնական ոյժերը։ «Русскій Инвалидъ» լրագիրը ենթադրութիւններ է անում եապօնական զօրքերի յարձակվող ոյժերի մասին գեներալ Կուրոպատկինի վրա։ Խայչէն տանող ճանապարհով գնում է կամ գվարդիան, կամ 2-դ դիվիզիան։ Դաշիչաօ կայարանը տանող ճանապարհով գնում է մօտ մէկ բրիգադա, որի գլխաւոր նպատակն է յարձակման ներկայ շրջանում կապ պահպանել երկու գլխաւոր զօրասիւների միջև։ Վերջապէս դէպի Գայչժօու տանող ճանապարհով առաջ է ընթանում ոչ պակաս 1½ դիվիզիայից, որոնցից մէկը անկասկած 10-դն է. մնացած մասը, նոյնպէս դէպի Դաշիչաօի կայարանը յարձակում գործող զօրամասը պատկանում են կամ 2-դ դիվիզիային կամ գվարդիային։ Այդ զօրամասերին, բացի պահեստի զօրքերից, թւում է, թէ պէտք էր աւելացնել գոնէ մէկ դիվիզիայի զօրամասերն ևս, որի համարը անյայտ է, ենթադրաբար ասենք 9-դը, որ մտնում է, նախկին տեղեկութիւնների համեմատ, այն զօրքի կազմի մէջ, որ ափ է իջեցրած Դագուշանի շրջականերում։ Ուրեմն այժմ մօտաւորապէս հետևեալ դաղափարը կարելի է կազմել եապօնական զօրքերի դիրքերի մասին. Գայչժօու—Խայչէն—Լեաօեան գծից դէպի հարաւ, առաջին կէտից աւելի քան 60 վերստ հեռաւորութեամբ, գտնվում է մի զօրախումբ, որ բաղկացած է գոնէ երեք դաշտային դիվիզիաներից,—5-ից, 8-դից և 11-դից,—և մէկ պահեստի դիվիզիայից, իսկ այդ գծից դէպի արևելք, նրանցից 35—55 վերստ հեռաւորութեամբ և 80 վերստ հեռաւորութեամբ հարաւային զօրախմբի աջ թևից, գտնվում են գեներալ Կուրօկիի զօրքերը, որոնք, բացի պահեստի զօրքերից, բաղկացած են, ոչ պակաս դաշտային չորս դիվիզիաներից, այն է գվարդիայից, 2-դ, 9-դ և 10-դ դիվիզիաներից։ (Тлф.)։

«Temps» լրագրի զինուորական թղթակիցը վլադիվոստոկեան էսկադրայի գործողութիւնների առիթով ասում է հետևեալը. «Մինչև փոփոխութիւններ անելը, Եապօնիայի ափերը պաշտպանվում են միայն 2-դ կարգի պատերազմական նաւերով, որոնք անընդունակ են կռիւ մղել այնպիսի զօրեղ պատերազմական միութիւնների դէմ, ինչպէս են «Գրոմօբոյ», «Բասսխա» և «Ռիւրիկ»։ Միւս կողմից, ծովապետ Կամիմուրայի մեծ զրահակիր կրէյսէրները հարկաւոր են Պօրտ-Արտուրի մօտ, այլապէս պաշարումը այնպիսի բերդի, որը առանց այն էլ թոյլ է, աւելի ևս կը թուլանայ։ Ըստ երևոյթին, այդպիսի պայմաններում ծովապետ Սկրիդլօվ հնարաւորութիւն կունենայ կրկնել իր աջող արշաւանքները և մշտական երկիւղի մէջ պահել Եապօնիան նրա երեք կրէյսէրների յանկարծակի երևալով։ Այդ սպառնալիքը մանաւանդ զգալի է այն բոպէին, երբ խոշոր փոխադրական գործողութիւնները կատարելուց յետոյ, բէկվիզիցիայի մէջ գտնվող նաւերի մի մասը պէտք է վերադառնայ ծառայութեան մանաւոր պէտքերի համար։ Առևտրական ընկերութիւնների նպատակը պէտք է դառնայ մթերքներ հայթհայթել երկրի համար, ուր արդէն սկսվել է մթերքների պակասութիւն զգացվել, որ չեն կարող հասցնել չէզոք պետութիւնների նաւերը, որովհետև մթերքների պաշարները յայտարարված են պատերազմական կօնտրաբանդա։ Իրերի այդպիսի դրութիւնից բղխում են տնտեսական ճնշումներ, որոնց Ռուսաստանը պէտք է աշխատէ հնարաւորութեան չափ մեծացնել, օգուտ քաղելով այդ գործունէութեան համար իր կրէյսէրներից։ (Тлф.)։

Ի՞նչ են ասում չինացիները եապօնացիների համար։ «Русскій Инвалидъ» լրագիրը գրում է. «Դեռ 1894—1895 թուականների ժամանակից եապօնացիները սարսափահար են արել չինացիներին։ Օգտվելով դրանից լայն չափերով, եապօնացիները չը տեսնված զարգացման են հասցրել լրտեսութիւնը պատերազմական գործողութիւնների դաշտում և նոյն նպատակով օգտվում են նրանցից առանձին պատերազմական գործողութիւններ պատրաստելու և կռիւներ մղելու համար։ Անցած չորս ամիսների ընթացքում եապօնական գործողութիւնների մէջ չէ տեսնված, որ հեծելազօրք գործածվի, ոչ հետախուզութիւններ կատարվեն և դրա համար տեղափոխութիւններ անվէին։ Մեր թշնամու մինչև այժմ ցոյց տուած տակտիկան, նրա առաջխաղացութիւնը կատարվում են առանց նախօրօք պատրաստութիւնների և խուզարկութիւնների։ Եւ այդ առաջ է գալիս նրանից, որ այդ բաները աւելորդ է ամենամեծ մասով, որովհետև մանրամասն և ճիշտ տեղեկութիւններ հաղորդում են չինացիները։ Չինացիները բաւական չեն համարում իսկոյն տեղեկութիւններ հաղորդելը մեր զօրքերի շարժումների, ոյժի, կազմութեան, տեղաւորութեան մասին, այլ և զանազան միջոցներով, նոյն իսկ ազդանշաններով, բացատրում են մեր թշնամուն մեր զօրքերի պատերազմական դիրքերը ամեն մի մանաւոր դէպքում։ Այս բանը մանաւանդ խիստ կերպով աչքի ընկաւ Վաֆանգօուի պատերազմում, ուր եապօնացիները հրակոծ էին անում նոյն իսկ մեր այն զօրաբաժինները, որոնք ծածկված տեղերում էին գտնվում։ Այդտեղ նոյն իսկ կռուի նպատակն էլ փոխվում էր, մի բան, որ կարող էր տեղի ունենալ միայն այն դէպքում, եթէ եապօնացիները ճիշտ գիտէնային մեր զօրքերում տեղի ունեցած փոփոխութիւնները։ Ի հաստատութիւն այս բանի յիշենք, որ այդ պատերազմում, որ տևեց երկու օր, յունիսի 1-ի ընդհարումը, թէև չէին եղել խուզարկութիւններ մեր դիրքերը իմանալու համար, մի շարք յատուկ յարձակումներից էր կազմված մեր ձախ թևի դէմ։ Իսկ յունիսի 1-ի կռիւը ուրիշ կերպարանք ունի. եապօնացիները գիշերով ճնշող քանակութեամբ զօրք են կենտրօնացնում մեր աջ թևի դէմ։ Պարզ է, որ այս փոփոխութիւնը տեղի է ունեցել շնորհիւ այն բանի, որ մեր դիրքերի մասին ճիշտ և որոշ տեղեկութիւններ էին ստացվել։

Ռուսները առաջ են արշաւում։ Ցինխուանչէնից «Daily Chronicle» լրագրին հեռագրում են. «Ռուսները Լեաօեանից արշաւում են հարաւային ուղղութեամբ, կենտրօնանալով Խայչէնի մօտ։ Ռուսների եռանդոտ արշաւանքը շատ հաւանական է դարձնում եապօնական երկրորդ բանակի անջատումը։ Այն գործողութիւնները, որ կատարում են ռուսները եապօնական առաջին բանակի աջ թևի դէմ, նշան են, որ մօտ են խոշոր ճակատամարտերը։» Տօկիօից հեռագրում են. «Սկսվեց նոր պատերազմ Գայչժօուի մօտ, որտեղից շատ գնացքներ ռուս վիրաւորնածների հետ դէպի հիւսիս գնացին»։ (Рус. Вѣд.)

Եապօնական ծովային մինիստրի բացատրութիւնը։ «Daily Telegraph» լրագրին հեռագրում են, որ եապօնական առաջադէմ կուսակցութեան մի պատգամաւորութիւն դիմեց ծովային մինիստրին և հարցրեց՝ թէ ո՞վ է պատասխանատու այն նոր աղէտի համար, որին ենթարկվեցին եապօնական փոխադրանաւերը։ Մինիստրը պատասխանեց, որ ծովապետ Կամիմուրայի վրա պարտաւորութիւն էր դրած չը թոյլ տալ, որ Վլադիվոստոկի և Պօրտ-Արտուրի էսկադրաները միանան և պահպանել Կօրէական նեղուցը։ Եթէ նա իր համար նպատակ դարձնէր պահպանել ամեն մի նաւ ծովում, այդ դէպքում նա երկրին մեծ դժբաղդութիւն պատճառելու բիսկի մէջ կընկնէր։ Առաւօտեան ժամի 8-ին Կամիմուրան իմացաւ Վլադիվոստոկի էսկադրայի ներկայութեան մասին և արդէն 9 ժամ 15 բոպէին նա իր ամբողջ էսկադրայով սկսեց հալածել թշնամուն։ Անցնելով 40 մղոն, նա 4 հանգոյց տարածութեան վրա մօտեցաւ թշնամու էսկադրային, բայց թանձր մառախուղը թոյլ չը տուեց նրան հետևել իր նաւերի ընթացքին։ Սակայն, օգտվելով անթել հեռագրից, նա շարունակեց հալածել ռուսաց նաւերը, մինչև որ նրանք փոխեցին իրանց ընթացքը և անյայտացան։ Ի վերջոյ ծովային մինիստրը յայտնեց, որ երբ փոխադրվում են մեծ զօրամասեր, փոխադրանաւերի հետ միշտ լինում են պատերազմական նաւեր, իսկ երբ փոքրիկ բաժիններ են գնում, այդպիսի բան չէ լինում։ (Т.А.)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Յունիսի 4-ին Պարիզի դատարանում վերջացաւ մի շատ հետաքրքիր գործի քննութիւն։ Յայտնի հրապարակախօս Ժօրժ Վիյլէն, որ առաջ «Temps»-ի աշխատակիցն էր և գրում էր միջազգային քաղաքականութեան մասին, այս տարի գրում էր «Figaro» մեծ, քաղաքական լրագրում։ Այդ լրագրի հրատարակիչը ուզեց ստիպել նրան իր անունը կրող մասում զետեղել մի յօդուած, որը Թիւրքիայի գործերի դրութիւնը ներկայացնում էր վարդագոյն երանգներով։ Վիյլէն հրաժարվեց իր ստորագրութիւնը դնելուց և յօդուածի սկզբում աւելացրեց հետևեալ բառերը «Թիւրքական դեսպանութիւնը հաղորդում է»։ Այն ժամանակ «Figaro»-ի հրատարակիչը արձակեց Վիյլէին խմբագրութիւնից։ Վերջինս դիմեց դատարան, խնդրելով հրատարակչից պահանջել իր օգտին իրը ֆրաանկ՝ մէկ ֆրանկ (37⅓ կոպէկ!)։ Դատարանը մերժեց Վիյլէի գանգատը իրաւաբանական տեսակէտից, թէև «Figaro»-ի հրատարակչին բարոյական տեսակէտից անարդար ճանաչեց։

—«Frankt. Zeit.»-ի ասելով, Դելկասսէի այն բառերը, թէ ապստամբութիւնը Թիւրքական գաղանութիւնների դէմ բողոքի միակ իսկական միջոցն է,—այդ բառերը հեռագրով անյապաղ հաղորդեցին սուլթանին։ Դրա հետ միաժամանակ Ֆրանսիական էսկադրան խրիսխ նետեց Սալօնիկի ծոցում, իսկ Ֆրանսիական օֆիցէրների պատգամաւորութիւնը՝ ծովապետ Գուրդօնը գլուխ ունենալով՝ կ. Պոլիս եկաւ։ «Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրի կծու խօսքերը, ասում է «F. Zeit.»-ը, չազդեցին այն սովորական սրտակցութեան և հիւրասիրութեան վրա, որով սուլթանն ընդունեց պատուաւոր հիւրերին։ Առաջին ան-

գամը չէ, որ սուլթանն անց է կացնում ծանր ժամեր և գիտէ իրան զսպել։ Սակայն թիւրքական նաւահանգստում այդ զօրեղ էսկադրայի ներկայութիւնը չէր կարող նրա վրա տպաւորութիւն չը գործել։ Բայց Ֆրանկֆուրտի գերմանական լրագիրը ֆրանսիացիների այդ քայլին վերագրում է ոչ թէ մարդասիրական որոշ նպատակներ, այլ պնդում է, որ նա այդ անում է լոկ շահագիտական նպատակով։ Գերմանացիները ձեռք բերին Կ. Պոլիս-Բաղդադ-Բասրայի գծի կառուցման իրաւունքը, նրանք էլ ուզում են Դամասկոսից Ջերիբ գծի իրաւունքը։

—Կ. Պոլսում, ինչպէս հաղորդում է «Koelnische Zeitung» լրագիրը, կայացաւ մինիստրական խորհուրդ, որը զբաղվեց Սասունի գործերի դրութիւնով։ Կարծում են, որ այդ ջարդերին առաջնորդող Բիթլիսի վալիին կը հեռացնեն պաշտօնից և տեղը ուրիշին կը նշանակեն։ (Русск. Вѣд.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правит. Вѣст.» լրագրում տպված է Բարձրագոյն հրաման տեղական դատաստանական հաստատութիւններիիրաւասութիւնից հանելու մասին գեներալ-ադիւտանտ Բոբրիկովի չարագործ սպանութեան գործը և յանձնել այդ գործը քննութիւն կատարելու համար Պետերբուրգի դատաստանական պալատի առանձին նշանաւոր գործերի դատաստանական քննիչ Կօրօբչիչ-Զէրնեավսկուն, Պետերբուրգի դատաստանական պալատի պրոկուրորի հսկողութեան ներքոյ։

ՄՈՒԿԴԷՆ, 11 յունիսի։ (Սեփ. թղթ.)։ Եապօնական նշանաւոր ոյժեր վերջերս կենտրոնանում են Սէնիւչէնի և Սիւեանի մօտ ծայրի աջ թևի վրա. հաւաքվում են զօրքերը Եալուի մօտ։ Գիշերը լոյս յունիսի 9-ին խունխուզների աւազակախումբը, հարիւր մարդուց աւելի, յարձակվեց երկաթուղիական կամուրջի վրա Գուչժուլին կայարանում։ Յարձակումը յետ մղվեց սահմանային պահակախմբի կամրջային պահապանների կողմից երկու թնդանօթներով։ Կամուրջը անվնաս է։ Լուրերին նայելով, աւազակային խումբը ղեկավարում էին եապօնացիները։

ԼԵԱՕԵԱՆ։ Սահմանապահ խմբի կաւաւոր Բաբինսկի, որը չինական երկաթուղու կօնդուկտօր Անդրիւխինի հետ միասին ոտքով անցնում էր, գերի ընկան եապօնացիների ձեռքը, շնորհիւ չինացիների դաւաճանութեան, և ճնցին մէկ պահապանի հսկողութեան տակ ամբողջ օրը։ Երեկոյեան դէմ պահապանը քնեց. գերիները բաց արին իրանց կապանքները, սպանեցին պահապանին և փախան, աննկատելի կերպով անցնելով՝ եապօնական զօրաբաժինների միջով երեսուն վերստ տարածութիւն մինչև մեր առաջապահ պահակները։

ԼԵԱՕՆԱՆ։ Անընդհատ շարունակում են զօրքեր գալ։ Նրանց ոգու տրամադրութիւնը գերազանց է։ Բժշկապետ Վլասովիչի կօնսերվ դրված միսը, որը փորձի ժամանակ փառաւոր հետևանքներ տուեց, լուրերին նայելով կընդունվի գործող զօրքի մէջ։

ՄՕՍԿՎԱ։ Զէմստվօի լիազօր պրօֆէսօր Գօլովին հաղորդում է Իրկուտսկից, որ փորձեր անող շոգեկառքը դիպաւ այն գնացքին, որի մէջ գտնում էր Մօսկվայի, Եարօսլաւի և Կոստրօմայի զէմստվօի ատենապետական խումբը։ Վնասվեցին մի քանի վագոններ և բեռներ։

Գուչկով և իշխան Վասիլչիկով հաղորդում են քաղաքագլխին, որ Իրկուտսկում և Սրէտէնսկում աւարտվում է երկու բարժերի սարք ու կարգը Մօսկվայի միջոցներով ուղարկվող լուղորդ հիւանդանոցների համար։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Քաղաքային դուման վճռեց մատուցանել երկրի գլխաւոր հրամանատար կոմս Կուտայիսովին, նրա 50-ամեայ ծառայութեան համար, ուղերձ և ալբոմ Իրկուտսկի տեսարաններով և անուանել լաւագոյն փողոցներից մէկը կոմս Կուտայիսովի անունով։

ՍԱԼՕՆԻԿԻ։ Ի նկատի ունենալով երեք վիլայէտների բիւդժէտի նշանաւոր ծանրաբեռնումը, նոյնպէս և նկատի ունենալով զօրքերի դժգոհութիւնը ռոճիկ չը ստանալու պատճառով, Կ. Պոլսում հաւանութիւն գտաւ գեներալ-տեսչի առաջարկութիւնը՝ արձակել ըէդիֆի բատալիօնները, որոնք զէնքի էին կանչված անցած տարվանից։ Հրաման է արձակված նախապատրաստել ըէդիֆի աստիճանաբար արձակումը։

ՏԱՆԺԷՐ։ Պէրդիկարիս և Վարլէյ վերադարձան։

ՄՕՆՏԷՎԻԴԷՕ։ Կառավարութիւնը տեղեկութիւն է ստացել կառավարչական զօրքերի տարած յաղթութեան մասին։ Սպանված են և վիրաւորված 600 ապստամբներ։

ՑԵՏԻՆԻԷ։ Արնաուտները, նիզամների աջակցութեամբ, հրացաններ էին կրակում չէրնոգօրցիների վրա, որոնք խոտ էին հնձում Մօրաչեան լեռներում։ Չէրնոգօրցիները պատասխանում էին կրակով, բարեբաղդաբար անհետևանք։ Երկիւղ էին կրում բարդութիւններից։ Բ. Դրան բողոք է ներկայացված։

ՍՕՖԻԱ։ Օխրիդից տեղեկութիւնները հաստատում են սով երևալու մասին։ Սօֆիայում ապրող մակեդօնացիները կոչ են անում նըւիրատուութիւններ անելու ի նպաստ կարօտեալների։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ։ Յունիսի 12-ին, գեներալ-ադիւտանտ Բոբրիկովի մահվան իններորդ օրը, Ուսպէնսկի տաճարում, ներկայութեամբ գեներալ Տուրբինի, գեներալների, զօրքերի և այլ աղօթողների, հոգեհանգստեան պատարագ մատուցվեց և հոգեհանգիստ կատարվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին յունիսի 12-ից. «Յունիսի 10-ին առաւօտվանից հակառակորդը շարունակում էր յարձակումը Գայչժօուի վրա։ Առջևից երեք խմբերով, իւրաքանչիւրում չորս-հինգ էսկադրօններ, ընթանում էր հեծելազօրքը, նրա ետևից երևում էին խիտ հետևակ զօրաշղթաներ, և աւելի ևս հեռու—պատերազմական զօրասիւններ։ Երեկոյեան մօտ նրա ուղեկալ զօրախմբերի գիծը տարածվում էր Խէ գետակի հովիտով, տասն և չորս վերստ դէպի հիւսիս Սէնիւչէնից։ Ետևը խմբված էր հեծելազօրքը։ Մօտդեռատուն գիւղը հակառակորդի աջ թևի վրա գրաւված էր հետևակ զօրքով և գնդաձիգներով։ Ամբողջ օրն անցաւ հրացանաձգութեան մէջ։ Վիրաւորված է մէկ զինուոր։ Սահմանապահները, կօրնէտ Ֆօն-Մայէրի հրամանատութեամբ, թակարդ լարելով, յանկարծ հրացանաձգութեան ենթարկեցին ձիաներից իջած եապօնական էսկադրօնը, որը մարդկանց և ձիերի նշանաւոր կորուստ ունեցաւ։ Մինչև մէկ ժամը յունիսի 11-ին հակառակորդը առաջ չը շարժվեց դէպի Գայչժօու։ Յունիսի 8-ից իմացվեց հակառակորդի շարժումը Կխանզից, հարաւային ճանապարհի վրա Սիւեանից դէպի Գայչժօու, միջանկեալ լեռնային ճանապարհով, որ անջատվում էր Կխանզից դէպի հիւսիս և դուրս էր գալիս դէպի Սեախօտան մօտ 356 վերստ դէպի արևելք Գայչժօուից։ Յունիսի 9-ին եապօնացիները գրաւեցին Սանդեաեու գիւղը, երկու վերստ դէպի հարաւ Սեախօտանից, բայց երեկոյեան, մեր առաջապահ զօրաբաժնի բուռն յարձակման շնորհիւ, մաքրեցին նրան։ Հակառակորդը կենտրօնացրեց Մադեավաիզի մօտ, երեք վերստ հարաւ-արևելեան կողմը Սեանդեաիւից, երեք բատալիօն վեց թնդանօթներով և չորս էսկադրօններով և լուսը բացվելուն պէս յունիսի 10-ին նրա զօրաբաժինը, բաղկացած մէկ բատալիօնից, երկու թնդանօթից և 2 էսկադրօնից, յանկարծակի յարձակում գործեց մեր առաջապահ հարիւրեակի վրա, որ կանգ էր առել իջևանելու համար Սանդեաիւի մօտ։ Հարիւրեակը ստիպված էր յետ նահանջել։ Եապօնացիները գրաւեցին այսպէս անուանված Սև լեառը Սեանդեաիւից դէպի հիւսիս և լեռնանցք դէպի արևելք նրանից, Սեանդեաիւից դէպի Սեանխատին տանող ճանապարհի վրա, երկու վերստ դէպի արևելք Սեախօտանից։ Առաջին հրաձգութիւնների ժամանակ մեր առաջապահ զօրքերը հաւաքված էին Սեախօտանի մօտ գտնվող բարձրութիւնների դիրքերի վրա։ Զորս հարիւրեակներին չորս լեռնային թնդանօթներով հրամայվեց յարձակում գործել Սեախօտանից լեռնանցքի վրայով Սեանդեաիւի ուղղութեամբ։ Մեր արտիլէրիայի կրակով եապօնացիները դուրս մղվեցին իրանց գրաւած դիրքերից, իսկ օժանդակ զօրքեր մօտենալուց յետոյ զօրաբաժինը ցերեկվայ 11 ժամին յարձակումն սկսեց ամբողջ ճակատակողմի վրա։ Հակառակորդը յետ քաշվեց կատարեալ անկարգութեամբ։ Կէսօրվայ մօտ մէկ ժամին գրաւվեց Սեադեաիւ գիւղը և այդտեղից մեր արտիլէրիան կրակով հալածում էր նահանջող եապօնացիներին, որոնք շտապով յետ էին քաշվում դէպի Էրլդագօու դէպի հարաւ-արևելք Մադեավանղից և աւելի հեռու։ Մեր կորուստներն են. վիրաւորված են երեք օֆիցէր և թեթև վէրք է ստացել մէկը. զինուորներ սպանված են եօթ և վիրաւորված են 14. կորել է մէկ հոգի։ Զօրաբաժնի հրամանատարը մեծ գովասանքով է խօսում մեր արտիլէրիայի գործողութիւնների մասին։ Յունիսի 10-ին կազակները Լիւդեախէի մօտ, եօթ վերստ դէպի հիւսիս Սէլիւչժանից, գլխաւոր ճանապարհի վրա Ֆինխուանչէնից դէպի Լեաօեան, թակարդ լարեցին, որի մէջ ընկաւ եապօնական զօրաբաժինը, որը կորցրեց սպանված և վիրաւորված 15 մարդ. մեզ մօտ վիրաւորվեց խօրունժիյ Պոլզով։ Առաւօտեան մօտ 11 ժամին, յունիսի 9-ին, մեր զօրաբաժինը, խուզարկութեան նպատակով, Այանեամինից վեց վերստ դէպի արևելք, Սայմացզիից դէպի Կուանդեանսեան տանող ճանապարհի վրա, հրացանաձգութիւն սկսեց հակառակորդի առաջապահ զօրամասերի հետ։ Մօտ կէսօրին մեր զօրաբաժինը յարձակում սկսեց հակառակորդի աջ թևի վրա, որը դուրս մղվեց մի քանի ամրացրած առաջաւոր դիրքերից։ Ցերեկվայ մօտ հինգ ժամին զօրաբաժինը մօտեցաւ հակառակորդի գլխաւոր դիրքին, մի և նոյն ժամանակ պարզվեց, որ նա գրաւված էր երեք հետևակ գնդերով 18 թընդանօթներով։ Մեր զօրքերը ճնացին գրաւած դիրքերի վրա, կուի չը բռնվելով գերազանց ոյժերի հետ։ Երեկոյեան մօտ 9 ժամին մեր զօրաբաժինը կատարեալ կարգով հեռացաւ Սայմացզիի ուղղութեամբ։ Վնասներն առ այժմ չեն պարզված։ Հակառակորդը մաքրեց Խուայժէնսեան քաղաքը։

ՏՕԿԻՕ։ («Էյէտէր»)։ Յունիսի 12-ին Պօրտ-Արտուրի մօտ ծովային պատերազմի վերաբերմամբ հաղորդում են, որ ռուսական նաւատորմը հինգշաբթի դուրս եկաւ Պօրտ-Արտուրից և յարձակում գործեց ծովապետ Տօգօի էսկադրայի վրա։ Ծովապետ Տօգօ զեկուցանում է, որ յունիսի 10-ին նրան հաղորդեցին ռուսական էսկադրայի երևալու մասին ոչ-հեռու Պօրտ-Արտուրեան նաւահանգստի մուտքից։ Տօգօ ասպարէզ եկաւ իր ամբողջ էսկադրայով և դիմաւորեց ռուսական զօրաբաժնին, որը բաղկացած էր վեց զրահակիրներից, հինգ կրէյսէրներից և տասնուչորս հակականանաւերից։ Այդ նաւերը ակներև կամենում էին գնալ դէպի հարաւ։ Եապօնական հակականանաւերը յարձակում գործեցին նրանց վրա։ Եապօնացիների կողմից վնասված է «Շարատակա» հակականանաւը, մի և նոյն ժամանակ սպանվեցին երեք մարդ և նոյնքան էլ վիրաւորվեցին. երեք ուրիշ եապօնական ականանաւեր թեթև վնասուածքներ ստացան։

ՇԱՆԳՀԱՅ։ («Հաւասի գործ.»)։ Տօկիօից Զէմուլպօ մտաւ «Մանդժումարու» փոխադրող նաւը օտար զինուորական գործակալներով և և լրագրական բէպորտէօրներով։ Նա երևի կերթայ դէպի Եալուի գետաբերանի մօտ գտնվող նաւահանգիստը։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ։ Ֆինլանդական կայսերական սենատի որոշումը 1904 թուի յունիսի 9-ին. «Կայսերական ֆինլանդական սենատը ներկայ թուին նիստի գումարվելով առաջին անգամ իր նախագահ գեներալ-նահանգապետ գեներալ-ադիւտանտ Բոբրիկովի վախճանից յետոյ, յաւիտենական հանգիստ մաղթելով նրա հոգանիթ նշխարքին, պահանջ է զգում իր խորագոյն զղջանքն արտայայտելու դէպի վրդովեցուցիչ, երկրի աւանդութիւնների մէջ իր նըմանը չունեցող գարշելի չարագործութիւնը, որի զոհ դարձաւ երկրի գեներալ-նահանգապետը և որը չափազանց դատապարտվում է երկրի բոլոր առողջամիտ բնակիչների կողմից։ Մի և նոյն ժամանակ սենատը ցանկանում է մատնացոյց անել ֆինլանդական ազգաբնակութեանը, թէ որպիսի խորին վիշտ պատճառող հետևանքներին արդէն հասցրեց մասամբ չարամիտ, մասամբ մոլորված անձանց վերջին տարիներս Ֆինլանդիայում կատարած դրդումները՝ չը հնազանդվել իշխանութիւններին և թէ որպիսի վտանգներ սպառնում են երկրին ապագայում, եթէ ագիտացիա կը շարունակվի, առանց դիմադրութեան հանդիպելու։ Սենատը այդ պատճառով դիմում է բոլոր առողջամիտ համաքաղաքացիներին լուրջ կոչով—և թող իւրաքանչիւրը իր շրջանում բոլոր ոյժերով աջակցէ վերականգնելու երկրի մէջ հանգիստ և խելացի յարաբերութիւններ դէպի երկրի գոյութիւն ունեցող դրութիւնը և թող աշխատէ արդարացնելու այն վստահութիւնը, որով ֆին ժողովուրդը, երկրի արդէն հարիւրամեայ անխզելի միութեամբ ճնալու ժամանակից զօրեղագոյն Ռուսական Պետութեան հետ, անգնահատելի բարիք ունէր վայելելու իր Միապետների մօտ, որոնց Ամենողորմած պաշտպանութեան ներքոյ Ֆինլանդիան հասաւ իր թէ հոգևոր և թէ նիւթական երջանիկ զարգացման։ Սենատը վճռեց հրատարակել որոշումը պաշտօնական տեղեկատուների մէջ և հաղորդել ներկայ օրսգիրը նորին բարձր գերազանցութեան գեներալ-նահանգապետի ժամանակաւոր պաշտօնատարին գրութեան հետ դէպարտամենտի փոխ-նախագահից։ Իսկական ստորագրեցին՝ փոխ-նախագահ եգերմէյստէր Լինդէր, սենատօրներ՝ Բէմ, Բէրգբօմ, Ֆալման, Նէօվիուս, Դէնէց, Օկէրման, Զիլման։

ՑԷՏԻՆԻԷ։ Իշխան Նիկոլայ հանդիսաւոր ճաշ տուեց ի պատիւ սերբիական կաբինէտի հրամանատար Նէնադովիչի և շնորհեց նրան Դանիէլի շքանշանը։

13 յունիսի

ՂԶԼԱՐ։ Կարանօզայեան ժողովուրդը 20,000 ր. նուիրեց նաւատորմի ուժեղացման համար։

ՏՕԿԻՕ։ («Վօլֆի գործ.»)։ Դագուչանեան զօրքից պաշտօնապէս զեկուցանում են, որ յունիսի 10-ին եապօնական զօրաբաժինը լուսաբացին յանկարծակի յարձակումն գործեց ռուսական հեծելազօրքի էսկադրօնի վրա Սանդաօգուից 10 մղոն դէպի հիւսիս Դաշիցեաօ տանող ճանապարհի վրա։ Եապօնացիները գերաւեցին բարձունքները Սանդաօգուից դէպի հիւսիս, դուրս մղելով այնտեղից ռուսներին։

ԳՕԼՏԷՆԱՈՒ։ Էդուարդ թագաւորը ժամանեց «Վիկտորիա և Ալբէրտ» զբօսանաւով։ Վիլհէլմ կայսրը սրտագին ողջունեց թագաւորին, բարևեց թագաժառանգ պրինցին և պրինցներին և շքախմբով անցաւ պատաւոր պահակի առջևից։ Երկու միապետներն ևս վերադարձան թագաժառանգի և պրինց Հէնրիխի հետ անգլիական արքայական զբօսանաւը, որը մտաւ նաւահանգիստ։

ԿԻԼ։ Նաւահանգիստը ժամանելուց յետոյ նոցա մեծութիւնները մտան «Հոհէնցօլէրն», ուր թագաւորն ընդունվեց կայսրուհուց։ Ճաշի ժամանակ «Հոհէնցօլէրնի» վրա Վիլհէլմ կայսրն ասեց մի տօստ, որի մէջ այն միտքը յայտնեց, որ նա չափազանց գոհ է, հնարաւորութիւն ունենալով առաջին անգամ ողջունել Էդուարդ թագաւորին գերմանական զինուորական նաւի վրա։ Գերմանական նաւատորմը ուրախ է տեսնելու իր պատաւոր ծովապետին։ Այդ նաւատորմը նորագոյն ստեղծագործութիւն է համաշխարհային նաւատորմի միջև և դրա պաշտօնն է ծառայել գերմանական առևտրի և գերմանական հողի պաշտպանութեանը։ Նա ծառայում է գերմանական զօրքի հետ միասին խաղաղութեան պահպանմանը, որը գերմանական պետութիւնը Եւրոպայի հետ միասին պահպանում են աւելի քան 30 տարի։ Այդ նպատակին հասնելու համար կայսրը լարել է իր ոյժերը։ Կայսրը բարձրացրեց բաժակը և խմեց թագաւորի կենացը։ Էդուարդ թագաւորը պատասխանեց գերմաներէն լեզուով մի տօստով, շնորհակալութիւն յայտնեց կայսրի բարեկամական խօսքերի և փառաւոր ընդունելութեան համար և ուրախութիւն յայտնեց, որ կարողացաւ այցելել կայսրին։ Նա ցանկանում էր անձամբ այցելութեամբ ամրացնել սրտակից, ազգականական յարաբերութիւնները։ Երախտագիտութիւն յայտնելով կայսրի ջանքի և ձգտման համար խաղաղութիւնը պաշտպանել, նա յայտնում է, որ խորապէս յուզված է այդ խօսքերով և հաւատացած է, որ կայսրը նկատի ունի նոյն նպատակը. և թող երկու դրօշակներն ևս հեռաւորագոյն ժամանակներում ծածանվեն միասին խաղաղութիւն պահպանելու նպատակով ի բարօրութիւն ոչ միայն մեր պետութիւնների, այլ և բոլոր ժողովուրդների։ Թագաւորը վերջացրեց իր ճառը կայսրի և կայսրուհու կենացներն առաջարկելով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունիսի 12-ին վախճանվեց ակադեմիկոս Նիկոլայ Ֆէդօրովիչ Դուբրովին։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Կատարվեց Կայսրուհու Մարիայի վարչութեան տակ գտնվող Ալէքսանդրեան արական ապաստանի շինութեան հիմնարկութիւնը։

ՏԱՇԿԷՆՏ։ Արքունական նաւթային ճեղքը Մայլիսայում յունիսի առաջին շաբաթվայ ընթացքում ֆոնտան էր խփում մինչև չորս սաժէն բարձրութեամբ։ Այժմ կազմվել է ժամանակաւոր խցան։ Նաւթը լցվում է։ Կառուցվող երկաթուղու վրա 591 վերստ ճանապարհ է դրված Տաշկէնտից։ Հարաւային հողաբաժնի վրա մնում է դնել 200 վերստ։

ՍՕՖԻԱ։ (Դիմադրական շրջաններից)։ Կ. Պոլսից հաղորդում են, որ անգլիական դեսպանութիւնը եռանդով պնդում է, որ խիստ քննութիւն կատարվի քիւրդերի ժամանակցութեան մասին Բիթլիսի վիլայէթում տեղի ունեցած բռնութիւնների մէջ։ Սուլթանը և Բ. Դուռը անանուն նամակներ են ստանում բօլգարների և կուցօվլախների դէմ Մակեդօնիայում, որոնք պարունակում են նրանց մի շարք մեղադրանքները դաւադրութիւնների և պետական դաւաճանութեան մէջ։ Թիւրքաց դաւառական իշխանութիւնները հրաման ստացան սաստկացնել հսկողութիւնը, մասնաւոր խուզարկութիւններ կատարել և յետաձգել այն 80 բատալիօնների արձակումը, որոնք զէնքի էին

կանչված անցեալ տարի ապստամբական շարժման ժամանակ։

ՏԱՆԺԷՐ։ Ամէրիկական էսկադրան յունիսի 13-ին գնում է Բէյրութ։

13 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գէնէրալ-ադիւտանտ Ալէքսէէվի հեռագիրը Նորին Մեծութեան 1904 թւի յունիսի 13-ից. «Պօրտ-Արտուրեան էսկադրան, կօնտր-ծովապետ Վիտգէֆտի դրօշակի տակ, բաղկացած 6 զրահակիրներից, 5 կրէյսէրներից և 10 ականանաւերից, դուրս եկաւ ծովը յունիսի 10-ին առաւօտեան 8 ժամին։ Լեաօտէշանի վրա ազդանշանային կայարանից արած դիտողութիւնների համեմատ, ելքը տեղի ունեցաւ առանց տեսանելի պատահարների։ Մեր նաւերի դուրս գալու ժամանակ հօրիզօնի վրա նկատվում էր թշնամու էսկադրան, բաղկացած 9 նաւերից, որոնց թւում կային 3 զրահակիր և 22 ականանաւեր։ Մեր էսկադրան յարձակում գործեց թշնամու վրա։ Հետևանքի մասին տեղեկութիւններ մինչև ներկայ րոպէն չեմ ստացել»։ Գէնէրալ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1904 թւի յունիսի 12-ից. «Յունիսի 12-ին առաւօտեան հակառակորդի առաջապահ զօրամասերը, որոնք գրաւած ունէին Խոգետակի հովիտը, 16 վերստ դէպի հարաւ-արևմուտք Գայչժուից, հեռացան 10 վերստ դէպի հարաւ, Սէնիւչինի մօտերը։ Ցերեկով յունիսի 11-ին հակառակորդի զօրաբաժինը, բաղկացած երկու վաշտից և երկու էսկադրօնից, մօտեցաւ Սեաղանի գիւղին լեռներում 11 վերստ հեռաւորութեամբ Գայչժուից, հարաւային ուղղութեամբ։ Թշնամու խուզարկու խմբերը երևացին նոյնպէս Խուայլաֆին տեղում, 25 վերստ հեռաւորութեամբ դէպի արևելք Գայչժուից, և 7 վերստ հեռաւորութեամբ դէպի հիւսիս-արևմուտք Զապանլին լեռնանցքից, հարաւային ճանապարհի վրա Սիւեանից դէպի Գայչժու։ Եապօնացիների առաջապահ զօրաբաժինը գրաւեց Տամեարլգօու գիւղը նոյնպէս դէպի Կխանդա տանող ճանապարհի վրա, մօտ 12 վերստ դէպի արևմուտք Զապանլինից դէպի Սեախոտան։ Թշնամու խուզարկու խմբերը կանգնած են Կօլտագօուի, Կխանդա—Սեախոտանի ճանապարհի վրա և Հադեազայզի միջև հիւսիսային ճանապարհի վրա Սիւեանից դէպի Գայչժու։ Լեռնանցքը Պանդղեաբէի և Պանչանիւի միջև շարունակում է չը գրաւած մնալ հակառակորդից։ Սիւեանից դէպի Խայչէնի ուղղութեամբ փոփոխութիւններ չը կան։ Ֆինխուանչէնից դէպի Խայչէն տանող ճանապարհի վրա, Սարկանգօու տեղում, 25 վերստ դէպի հիւսիս-արևմուտք Ֆինխուանչէնից, յունիսի 11-ին մեր կամաւորները ընդհարում ունեցան Թշնամու խուզարկու խմբի հետ, որը կորցրեց մէկ սպանված։ Երեկոյեան մօտ՝ յունիսի 11-ին իմացվեց եապօնացիների յարձակումը Սարգանգօուից դէպի առաջ Խայչէնեան ճանապարհով և նրանց առաջապահ զօրաբաժինը, բաղկացած երկու վաշտից, գրաւեց Կանգացուզա գիւղը, մօտ 8 վերստ դէպի հիւսիս-արևմուտք Սարգանգօուից, նոյնպէս և հակառակորդի մի ոչ-մեծ զօրաբաժին գրաւեց Տունգօպուզա 8 վերստ դէպի հիւսիս-արևմուտք Սէլիւչժանից։

14 յունիսի

ԼԵԱՕԵԱՆ։ Բուրբօնեան պրինցը, մեր վերաւորների վրա եապօնացիների վրդովեցուցիչ բռնութիւնների վկայ-ականատեսը, որոնց կատր-կատր էին անում սուրիներով մահից յետոյ, թողեց Վաֆանգօու կայարանում, որը մաքրել են մերոնք և գրաւել են եապօնական զօրքերը, յայտարարութիւն եապօնական գեներալներին ուղղած բոլոր տեսածների մասին, այն համոզմունքը յայտնելով, որ այդպիսի գազանութիւններ սրանից յետոյ այլ ևս տեղի չեն ունենայ։ Յայտարարութիւնը խոշոր տառերով գրված է Վաֆանգօու կայարանի պատերի վրա, նորին բարձրութեան ստորագրութեամբ։

ՎԻԼՆԱ։ Ժամանեց եպիսկոպոս բարօն Բօպ կաթոլիկ ազգաբնակութեան ահագին բազմութեան ներկայութեամբ։

ԿԻԼ։ Վիկտորիա և Ալբէրտ արքայական զբօսանաւի վրա տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ, որին ներկայ էին կայսերական զոյգը, թագաժառանգ պրինցը և պրինց Հէնրիխ։

ԼԵԱՕԵԱՆ։ («Ռէյտէրի գործ.»)։ Գէնէրալ-ադիւտանտ Կուրոպատկինի ահագին զօրքի առջև զետեղվեցին Օկուի և Կուրօկիի զօրքերը 6 դիվիզիայից իւրաքանչիւրում։ Նրանք դասաւորվում են պատերազմական կարգով։ Պատերազմական դիծը ամրացնում է յինակէտերով։ Լեաօդունեան թերակղզու վրա եապօնական զօրքերի թիւը գոնէ երեք անգամ գերազանցում է այն զօրքերին, որոնք գործում էին Տիւրենչէնի և Վաֆանգեանի մօտ եղած պատերազմներում։ Կուի համար պատրաստ զօրամասերի միմեան մօտենալը աւելանում է։ Ընդհանուր լարված դրութիւն է տիրում։ Անձրևների շրջանի մօտենալը անխուսափելի է դարձնում մեծ պատերազմ, որը դարագլուխ կը կազմի Հեռաւոր Արևելքի պատմութեան մէջ։

ԲԼԱԳՕՎԷՇՉԷՆՍԿ։ Խարբին են ուղարկված Կարմիր խաչի հինգ բարժ-հիւանդանոցներ։ Նրանց հետ գտնվում է կառավարիչ բարօն Բուդբէրգ։

ՉԻՏԱ։ («Ռէյտէրի գործ.»)։ Պօրտ-Արտուրի շրջականներից եկած չինացին հաղորդում է, որ հինգշաբթի լուսաբացին նա տեսաւ երկու մեծ եապօնական նաւեր և երեք ականանաւ, որոնք ակներև դուրս էին եկել կազմից և հեռանում էին ծովապետ Տոգօի նաւատօրմից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս է տեսել
«ՋԻՒԱՆՈՒ ՔՆԱՐԸ»
նոր հրատարակութեան երկրորդ հատորը
(հեղինակի պատկերով)
Գինն է 50 կոպէկ։
Առաջին հատորը (50 կ.) այնպէս էլ այս և հետևեալ գրքերը ցանկացողները պէտք է դիմեն Թիֆլիսում յայտնի գրավաճառանոցները և հեղինակին (Аргутинская ул. № 60)։
Մասուլի տակ է երրորդ հատորը։ Բաժանորդագրութիւնը փակված է։
Խնդրում ենք մեր Թիֆլիսի բաժանորդներին իրանց գրքերն ստանալ «Գուտտէնբէրգ» գրավաճառանոցից, ցոյց տալով անդորրագրերը։
3—10

Բ Ժ Ի Շ Կ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ամառվայ ընթացքում սկսած յունիսի մէկից ընդունում է Ալէքսանդրօպոլում մասնաւորապէս սիֆիլիս, մորթու, վենէրական և վիրաբուժական ախտ ունեցող հիւանդներին. հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ 12—2 առաւօտեան, 5—6 ժ. երեկոյեան. Պուշկինսկի փողոց (Пушкинская ул. № 59) սեփական տուն, № 59. (շ. չ.)

Աբիսող. Յովհաննիսեանցը
տալիս է դասեր և օգնում է դաս պատրաստելիս թէ մաթեմատիկայից և թէ ֆիզիկայից։
Աբաս-Աբադեան հրապարակ, տուն Շանշեանցի։ ե. հ. շ. 1—5

«ԹԻՖԼԻՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ»
հրատարակութեամբ լոյս տեսաւ և վաճառվում է
Ա. Անարոնեանի
ԿԵԱՆՔԻ ԴԱՍ
2-րդ տպագրութիւն.
Գինն է 5 կոպ.
գումարով գնողներին 30% զեղչ. ճանապարհածախսը նրանց վրա։ Դիմել՝ Тифлисъ. Въ Тифлисское Издательское Т-во, իսկ փոխ ուղարկելիս աւելացնել՝ Геворку Бабурянцу.
Վաղը լոյս կը տեսնի № 12.
Վ. Փափազեանի—«Կայսրուհի հոգին և անկեղծ ընծայ (զրոյցներ). գ. 4 կոպ. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
կառապանների առագ ժաբինին և նրա օգնական Բեմիզովին իրանց պաշտօններից արձակելու պատճառով, նշանակել է կառապանների աւագի և նրա կանդիդատի ընտրութիւնը ներկայ յունիսի 17-ին, հինգշաբթի օրը, երեկոյեան 5 ժամին, Քաղաքային Վարչութեան շէնքում և խնդրում է բոլոր թեթև կառքեր պահողներին նշանակված ժամանակը շնորհ բերել Ուպրավա, բլեախները կամ թեթև տեղափոխութեան պարտադիր կանոնների գրքոյկները, հետները, յիշված ընտրութիւնը կատարելու համար։ կ. ե. չ. 2—3

ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Յ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ
(XIV-րդ տարի իր գոյ.)
Ընդունվում են աշակերտներ ամառանոցում միմիայն գիշերօթիկներ բոլոր միջնակարգ պետական դպրոցները մտնելու համար։ Աւանդվում են վարժարանում հայոց լեզու, կրօն, ֆրանսիական և գերմանական լեզուներ հմուտ վարժուհու ղեկավարութեամբ գործնական և տեսական եղանակով։
Հասցէն. На Верѣ, Сабуртало, соб. домъ, կամ թէ չէ՝ տեղեկանալ՝ մագազին Շադինովի, քաղաքային դումայի տակ։
Վարժարանի կառավարիչ՝
4—4 հ. շ. կ. ե. Յ. Ղարագեօզեան

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՅՈՒՄՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԵԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։
Պարապմունքի առարկաներն են.
1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղագիր ամեռավատ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համրիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Ռէմինկտոնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։
Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործին մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։
Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1904 թւի սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն ճաշից յետոյ՝ 60 բուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։
Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։
Դրանից անկախ, 1904 թւի սեպտեմբերի 1-ից կը բացվեն քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абраамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։
Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (կ. ե. հ.) 1—25

ԿՐԿԻՆ ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՈՒՄ
70% ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ 70%

Վերջին ժամանակի մրցումը, պահեստում եղած ապրանքների մեծ պաշարը և ֆիրման տարածելու ցանկութիւնը մեզ դրդում է առաջարկել չը տեսնված էժան գնով, ՄԻԱՅՆ 5 Ր. 90 կ.-ով, ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՁԱԽԲԸ ՀԵՏԸ ՄԻԱՍԻՆ՝ հետևեալ օգտակար և արժէքաւոր 8 իրերը։ 1) Սև ագուաագոյն պողպատէ տղամարդկանց կամ կանանց ժամացոյց վերադիր ոսկուց (հաստատապէս ոսկեջրած՝ կրակով), շատ ճաշակաւոր, ամուր մեքանիզմով և 6 տարվայ գարանտիայով։ 2) Շղթայ նոր ոսկուց զօծված կամ նիկելից կամ կանանց վզի։ 3) Բրելօկ նոր ոսկուց—«Կողմնացոյց» կամ «Բինօկլ» պիկանտ տեսարաններով, կամ ուրիշ։ 4) Ձամբէ քսակ ժամացոյցը փչանալուց զերծ պահելու համար։ 5) Դրպանի ելեֆտրական ֆօնար՝ զօրեղ լոյս տուող կամ 56 պրօբէ ոսկէ մատանի կամ կաշուէ պօրսիգար կամ թէ «Իմպերիալ» Ստերէօսկոպ 25 պատկերներով. 6) Լաւ արտասահմանեան պողպատից գրչահատ կամ ծխամորճ անվնաս ծխելու համար շինված ծալովի մկրատ։ 7) Կաշվէ դրամապանակ՝ մի կտորից, 7 բաժանմունքով, մեքենական փականքներով, անուան, հայրանուն և ազգանուան համար կնիքով։ 8) Թղթապանակ արտասահմանեան կաշուց՝ այցեատոմսերի, թղթերի և դօկումենտների համար կամ մի զոյգ ոսկէ օղեր 56 պրօբի քարերով, կամ մեֆենական ինֆնաշարժ այրիչ «Էդիսըն» (լիովին բռնուէ լուցկու տեղը)։ Այս բոլորն ուղարկում ենք ձրի պրեմիայով, առանց կանխավճարի, վերադիր վճարով՝ միայն 5 ր. 90 կ. ճանապարհաճախով։ Ժամացոյցները ծածկով լինելիս՝ 1 ր. 50 կ. աւելի թանգ։ Պահանջներով դիմել. глав. складъ часовъ Торгов. Дома Ш. Якобсона, Варшава. Твердая № 22/225 (20 մ. յ. 2, 14, 26) 3—4

ՏԻԿԻՆ Մ. ՄԱԿԱՐԵԱՆԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՑԱՆԶՆԱԺՈՂՈՎԸ
յայտարարում է ի գիտութիւն բոլոր հայ գրագէտների, որ հանգուցեալ տիկին Մակարեանի կտակի համաձայն հայերէն լեզուով գրված ինքնուրոյն թատերական երկի համար մրցանակ նշանակված է այս տարի 150 բուբլի։
Մրցանակին մասնակցելու պայմաններն են.
1) Գրուածքը պէտք է լինի հերէն և նայ որ, դեռ ոչ մի հայկական բեմի վրա չը ներկայացված կամ միայն վերջին սեզօնում մի անգամ խաղացված։
2) Գրուածքը պէտք է ուղարկել Թիֆլիսի Հայոց Դրամատիկական ընկերութեան վարչութեան հասցէով։ (Барятинская, № 8, княгинѣ М. М. Тумановой.
3) Գրուածքը պէտք է ուղարկվի մինչև ներկայ տարվայ օգոստոսի 20-ը. այդ թւից յետոյ հասած պիէսը կը մնայ հետևեալ տարվայ մրցութեան։
4) Գրուածքը կրելու է իր վրա հեղինակի որոշած կեղծ անունը և հետն ունենալու է նոյն կեղծ անունը կրող մի երկրորդ փակ ծրար, որի մէջ պէտք է լինի հեղինակի իսկական անունը և հասցէն։ Երբ գրուածքը դատվի մրցանակի արժանի, այն ժամանակ կը բացվի երկրորդ ծրարը և կիմացվի հեղինակի իսկական անունն ու հասցէն։ Մրցանակի արժանի չը դատված երկերի անունները յանձնաժողովը՝ առանց երկրորդ ծրարը բանալու և հեղինակի իսկական անունը իմանալու, կը յայտարարէ, որ տէրերը բարեհաճեն որ և է ձևով յետ ստանալ։
(ե.) 4—5

Կենտրոնական գրավաճառանոցում
վաճառվում են հետևեալ նոր գրքերը՝
Առաքելեան Հ., Անգլիայի քաղաքական և հասարակական կեանքը, Թիֆլիս, 1904 թ. գ. 15 կ.
Բուդուղեան բժ. Ա., Մտերմական խորհուրդներ պատանիներին (օնանականութեան դէմ և այլն), Թիֆլիս 1904 թ. գ. 20 կ., Ուր ծախվում էն այս բժշկի միւս գրքերն ևս։
Մէնդիս պրօֆ., Կրօնի պատմութիւնը, նախնական հաւատալիքների նկարագիրը և կրօնական մեծ սիստէմների բնոյթը, Թիֆլիս 1904 թ. գ. 1 ր. 25 կ.
Սաթունեան Ն. և Զանուսմեան Գ., Ոսոիկ, հայ կանանց ժողովածու Գ. Զանշեանի յիշատակին, Աղէքս. 1904 թ. գ. 70 կ.
Սմբատով Ա. իշխ., Դաւաճանութիւն, դրամատիկական լեգենդա Վրաստանի անցեալից 5 գործող., Թիֆլիս 1904 թ. գ. 50 կ.
Վրձին (Ա. Քալանթար), Մանրանկարներ, հատ ա. և բ., Թիֆլիս 1903 թ. գ. 1 ր. 50 կ.
Ղազարեան Գ., Մեղուաբուծութիւն, նկարներով, Վաղարշապատ գ. 50 կ.
Մելիք-Շահնազարեան Կ., Վազի մշակութիւնը, պատկերազարդ, Թիֆլիս գ. 1 ր.
Շանթ, Դերասանուհին—40 կ., Դարձ—40 կ., Վիրժին—60 կ. և Երազ օրեր—40 կ.
Պռօշեան Պ., Սօս և Վարդիթեր, վէպ, գ. տիպ, Բագու գ. 1 ր. 20 կ.
» Յունօն վիպակ Թիֆլիս գ. 1 ր.
Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (երբ.) 3—5

Дозволено Цензурою. Тифлисъ, 14-го іюня 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81